



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 19շ 71-5-10

Թիվ 19/ **101**
„ 31 „ մայիսի 2019թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ**

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի կողմից 2019թվականի մայիսի 22-ից մինչև մայիսի 31-ը ընդունված որոշումները:

Առդիր „ **1** „ թերթից:

Համայնքի ղեկավար՝



Ռ.Մարգարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի, 1փ 192 71-510

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«30» մայիսի 2019 թվականի N 25-Ա

ԱՏՈՄ ՌԱԶՄԻԿԻ ԶՈՂՐԱԲՅԱՆԻՆ և ՄՅՈՒՍՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, ՕՐԻՆԱԿԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՄԻՆՉԻՆ 20% ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ
ՀՈՂԱՄԱՍԸ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Ատոմ Ռազմիկի Զոհրաբյանի ընտանիքին, Արմավիր գյուղի բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 25.02.1991թվ-ի թիվ 1 որոշումով հատկացված 0.24 հա, գյուղատնտեսական նշանակության հողամասը, փաստացի քարտեզագրման տվյալներով կազմել է 0.2796 հա՝ /կադաստրային ծածկագիր 04-020-0134-0007/;

0.24 հա գյուղ. նշանակության հողամասին կից ավել օգտագործվող 0.0396 հա հողամասը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, Արմավիր գյուղի ավագանու 01.06.2018 թվ-ի 23-Ա որոշումով և հիմք ընդունելով Ատոմ Ռազմիկի Զոհրաբյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1 Օրինական գյուղ. հողամասին կից մինչև 20% ավել հողամասը՝ 0.0396 հա, անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Ատոմ Ռազմիկի Զոհրաբյանին ծնված՝ 25.10.1967 թվ-ին, Գոհար Ռաֆիկի Զոհրաբյանին ծնված՝ 05.10.1968 թվ-ին, Ռոզա Ատոմի Զոհրաբյանին ծնված՝ 11.05.1989 թվ-ին, Անի Ատոմի Զոհրաբյանին ծնված՝ 20.08.1990 թվ-ին;

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզերի միավորված ստորաբաժանում՝ պետական գրանցման համար.
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Արմավիր գյուղական համայնքի ղեկավար՝

Ռ.Ֆ.Մարգարյան

